ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԺԵՅՈՒ ՍՈՆԳ

ԱՆՁՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԺԹ 00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Նարինե Գագիկի Խաչատրյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆ. **Կամո Երեմի Վարդանյան**
	Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Գոռ Սուրենի Եսայան**
Առաջատար կազմակերպություն	**ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտրոն**

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2026թ. հուլիսի 2-ին, ժ. 16:00-ին Երևանի պետական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲԿԳԿ-ի հոգեբանության 067 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52ա:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2026 թ. հունիսի 1-ին:

Հոգեբանության 067 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Դավիթ Հայրապետյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Երիտասարդության և ուսանողական տարիքը զարգացման այն փուլն է, որի ընթացքում անձը միաժամանակ բախվում է ինքնուրույնության ձևավորման, սոցիալական նոր հարաբերությունների կառուցման, մասնագիտական ինքնորոշման և ակադեմիական բարձր պահանջների հետ: Բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելը հաճախ սրում է այդ զարգացման մարտահրավերները, քանի որ ուսանողը ստիպված է համատեղել ակադեմիական առաջադրանքները, սոցիալական ինտեգրումը, ֆինանսական կամ ընտանեկան պարտավորությունները և ապագայի նկատմամբ անորոշությունը (McPhillips, D. 2023; Eisenberg, D., Golberstein, E., & Hunt, J. B., 2009; Richardson, T., Elliott, P., & Roberts, R., 2017): Այս պայմաններում ուսանողների հոգեբանական բարեկեցությունը դառնում է ոչ միայն անհատական հոգեկան առողջության, այլև կրթական հաջողության, ակադեմիական շարունակականության և մասնագիտական զարգացման կարևոր նախապայման (Mazzucchelli, T. G., & Purcell, E., 2015):

Ավանդաբար համալսարանները ուսանողների հոգեկան առողջությունը դիտարկել են որպես ոչ ուսումնական բնույթի խնդիր՝ հիմնական ակադեմիական առաքելությունից առանձին: Համալսարաններն արձագանքել են ուսանողների հոգեկան առողջության խնդրին, երբ այդ խնդիրները խոչընդոտել են ուսանողների առաջխաղացմանը՝ այդպիսով ցուցաբերելով ռեակտիվ (կլինիկական) մոտեցում հոգեկան առողջության խնդրին, այսինքն՝ կենտրոնալով բուժման և ոչ թե կանխարգելման վրա:

Ժամանակակից բարձրագույն կրթության ուսանողակենտրոն ուղղվածությունը պահանջում է ուսանողի անձի համակողմանի աջակցություն՝ դուրս գալով միայն առաջադիմության և ակադեմիական արդյունքների գնահատումից (Segú-Odriozola, M., 2025): Կրթական սթրեսը, մրցակցային միջավայրը, ձախողման վախը, սոցիալական հարմարման դժվարությունները և ապագայի անորոշությունը կարող են նվազեցնել ուսանողների բարեկեցությունը (Cashman, M. R., Strandh, M., & Högberg, B., 2024): Միևնույն ժամանակ աջակցող ակադեմիական միջավայրը, ներգրավվածությունը (Dogan, U., 2015; Gray, J. A., & DiLoreto, M., 2016), աճին միտված մտածելակերպը (Zeng, G., et al., 2016) և առաջխաղացման դրդապատճառները (Lanaj, K., Chang, C. H., & Johnson, R. E., 2012) կարող են հանդես գալ որպես հոգեբանական պաշտպանիչ

գործոններ: Այդ պատճառով անհրաժեշտ է ուսանողների բարեկեցությունը դիտարկել որպես անձի ներքին ռեսուրսների և ակադեմիական միջավայրի դինամիկ փոխազդեցության արդյունք:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Հոգեբանական բարեկեցության հիմնախնդիրը լայնորեն ուսումնասիրվել է սուբյեկտիվ բարեկեցության և կյանքով բավարարվածության (Diener, E., 1984), էվդեմոնիկ և հեդոնիկ բարեկեցության (Ryff, C. D., 1989; Ryan, R. M., & Deci, E. L., 2001), ինչպես նաև հոգեկան առողջության մոտեցումների շրջանակներում: Ուսանողների ներգրավվածության վերաբերյալ հետազոտությունները ցույց են տալիս, որ ակադեմիական և սոցիալական ներգրավվածությունը կապված են ինչպես ակադեմիական հաջողության, այնպես էլ ուսանողների հոգեկան առողջության և բարեկեցության հետ: Միևնույն ժամանակ վարքի կարգավորման կողմնորոշման տեսությունը (Higgins, E. T., 1998) և աճին միտված մտածելակերպի տեսությունը (Dweck, C. S., 2006; Ortiz Alvarado, N. B., Rodríguez Ontiveros, M., & Ayala Gaytán, E. A. 2019) հնարավորություն են տալիս բացատրել, թե ինչու նույն կրթական միջավայրում որոշ ուսանողներ դրսևորում են հարմարվողականություն և բարեկեցության բարձր մակարդակ, իսկ մյուսները՝ սթրես և հոգեբանական խոցելիություն (Yeager, D. S., & Dweck, C. S., 2012; Zeng, G., et al., 2016): Սակայն հայաստանյան բարձրագույն կրթության համատեքստում ուսանողների հոգեբանական բարեկեցության՝ միաժամանակ անհատական-դրդապատճառային և ակադեմիական-վարքային կանխորոշիչների համակարգված ուսումնասիրությունը դեռևս բավարար չափով զարգացած չէ, ինչն էլ պայմանավորում է սույն հետազոտության գիտական անհրաժեշտությունը:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել անհատական հոգեբանական առանձնահատկությունների և ակադեմիական միջավայրում ներգրավվածության կանխատեսող դերը բուհի ուսանողների հոգեբանական բարեկեցության պահպանման գործում՝ երկու առանձին էմպիրիկ հետազոտությունների միջոցով:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Համադրել վարքի կարգավորման ձևերի, նպատակադրումների, վարքաձևերի և ուսանողների ներգրավվածության վերաբերյալ առկա տեսությունները՝ ակադեմիական միջավայրում հոգեբանական բարեկեցության հասկացման տեսական շրջանակ մշակելու նպատակով:
2. Ուսումնասիրել սոցիալ-հոգեբանական վարքային գործոնների՝ ակադեմիական և սոցիալական ներգրավվածության կապը

ուսանողների ակադեմիական միջավայրում հոգեբանական բարեկեցության հետ և վերլուծել դրանց կանխատեսող ազդեցությունը:

3. Ուսումնասիրել անհատական տարբերությունների՝ աճին միտված մտածելակերպի, կանխարգելման և առաջխաղացման դրդապատճառային կողմնորոշումների կապը ակադեմիական միջավայրում ուսանողների հոգեբանական բարեկեցության հետ և վերլուծել դրանց կանխատեսող ազդեցությունը:
4. Համադրել երկու էմպիրիկ հետազոտությունների արդյունքները՝ ուսանողների հոգեբանական բարեկեցությունը պահպանող գործոնների համապարփակ բնութագիր տալու և բուհական աջակցության համակարգերի համար ապացուցահեն առաջարկություններ ներկայացնելու նպատակով:

Հետազոտության օբյեկտը: Բուհերի ուսանողների հոգեբանական բարեկեցության երևույթն է, որը դիտարկվում է որպես ուսանողների հոգեկան առողջության կարևոր բնութագիր:

Հետազոտության առարկան: Ակադեմիական և սոցիալական ներգրավվածության, ինչպես նաև վարքի կարգավորման դրդապատճառային և կոգնիտիվ բաղադրիչների դերն է՝ որպես բուհերի ուսանողների հոգեբանական բարեկեցությունը կանխորոշող գործոններ:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ բուհի ուսանողների հոգեբանական բարեկեցությունը բազմաչափ երևույթ է, որը նշանակալիորեն և դրականորեն կանխորոշվում է բուհական միջավայրում ուսանողների ներգրավվածության և վարքի կարգավորման կոգնիտիվ ու դրդապատճառային գործոնների համատեղ ազդեցությամբ:

Մասնավոր վարկածներ.

1. Վարքի կարգավորման անհատական տարբերությունները, մասնավորապես՝ աճին միտված մտածելակերպը և առաջխաղացմանը միտված նպատակադրումը, նշանակալիորեն և դրականորեն կանխորոշում են ուսանողների հոգեբանական բարեկեցությունը, մինչդեռ կանխարգելմանը միտված նպատակադրումը հանդես է գալիս որպես բացասական կանխորոշիչ:
2. Բուհական միջավայրում ուսանողների ներգրավվածությունը, մասնավորապես՝ ակադեմիական և սոցիալական ներգրավվածության միջոցով, նշանակալիորեն պայմանավորում է ուսանողների հոգեբանական բարեկեցությունը:

Հետազոտության մեթոդական և տեսական հիմքը: Սույն ուսումնասիրության համար որպես տեսական հիմք են ծառայել սուբյեկտիվ և հոգեբանական բարեկեցության վերաբերյալ տեսությունները, մասնավորապես, Է. Դիների (Diener, E.,1984), Ք. Ռիֆի (Ryff, C. D.,1989), Ռ. Ռայանի և Է. Դեցիի (Ryan, R. M., & Deci, E. L., 2001) մոտեցումները, վարքի կարգավորման կողմնորոշման տեսությունը (Higgins, E. T., 1977, 1998). Gao, J., Hodis, F. A., & Tait, C. F., 2022), աճին ուղղված մտածելակերպի տեսությունը (Dweck, C. S.,1999, 2006) և ուսանողների ներգրավվածության վերաբերյալ ժամանակակից հայեցակարգերը (Kahu, E. R., 2013; Horstmanshof, L., & Zimitat, C., 2007; Greenwood, C. R., Horton, B. T., & Utley, C. A. (2002): Այս մոտեցումների համադրությունը հնարավորություն է տվել ուսանողների հոգեբանական բարեկեցությունը դիտարկել որպես անձնային համոզմունքների, մոտիվացիոն կողմնորոշումների և ակադեմիական միջավայրում վարքային ներգրավվածության փոխկապակցված արդյունք:

Հետազոտության մեթոդները և ընտրանքի ընդհանուր բնութագիրը:

Հետազոտությունն իրականացվել էր հարցարանային մեթոդով: Առաջին հարցմանը մասնակցել են հայաստանյան բուհերի 332 ուսանողներ: Ուսանողների բարեկեցությունը չափվել է Ուորվիկ-Էդինբուրգի հոգեկան բարեկեցության սանդղակով (WEMWBS), իսկ անհատական առանձնահատկությունների գնահատման համար կիրառվել են «աճին միտված մտածելակերպի» և «վարքի կարգավորման կողմնորոշման» հարցարանները: Երկրորդ հետազոտությանը մասնակցել են հայաստանյան բուհերի 94 ուսանողներ: Ներգրավվածությունը գնահատվել է Բարձրագույն կրթության ուսանողների ներգրավվածության սանդղակի (HESES) ադապտացված տարբերակով՝ առանձնացնելով ակադեմիական և սոցիալական ներգրավվածության բաղադրիչները:

Երկու հարցումներում էլ ներառվել են ժողովրդագրական և կրթական տվյալներ՝ տարիքը, սեռը, ուսումնառության կուրսը, զբաղվածության կարգավիճակը, ուսման վճարի տեսակը և ուսուցման ձևը:

Տվյալների վերլուծության համար օգտագործվել են նկարագրական վիճակագրություն, կորելյացիոն վերլուծություն, միջին արժեքների համեմատություն, ռեգրեսիոն վերլուծություն, ինչպես նաև հարցարանների հուսալիության և վալիդության գնահատման նպատակով Կրանբախի ալֆա և գործոնային վերլուծություն:

Հետազոտության գիտական նորույթը:

1. Սույն հետազոտությունը բացահայտում է, որ ակադեմիական

միջավայրում հոգեբանական բարեկեցությունը ոչ միայն անձնային և ոչ միայն միջավայրային պայմանավորվածություն ունի: Թեև իրականացվել են առանձին ուսումնասիրություններ տարբեր ուսանողական ընտրանքներում, արդյունքները ցույց են տալիս, որ «ընդառաջ» գնալու վարքային կողմնորոշումը (approach orientation)՝ որպես ձեռքբերման, սեփական կարողությունները զարգացնելու, նվաճումներ ունենալու նպատակադրում, հոգեբանական բարեկեցության նշանակալի կանխորոշիչն է:

2. Սույն հետազոտությունը հիմնավորված ցույց է տալիս, որ ուսանողների ակադեմիական ներգրավվածությունը առավել նշանակալի դեր ունի ուսանողների հոգեբանական բարեկեցության պահպանման համար, քան սոցիալական ներգրավվածությունը, ինչը կարելի է պայմանավորվել տարիքին բնորոշ ինքնազարգացման դրդապատճառներով:

3. Սույն հետազոտությունը ներկայացնում է նոր ապացույցներ առ այն, որ կանխարգելումը՝ որպես նպատակներին հասնելու վարքի կարգավորման կողմնորոշում (սխալներից խուսափելու ճանապարհով), նպաստավոր չէ ուսանողների հոգեբանական բարեկեցության համար:

Հետազոտության տեսական նշանակությունը: Ատենախոսության արդյունքները հնարավորություն են տալիս ընդլայնելու վարքի կարգավորման, աճին միտված մտածելակերպի և ուսանողների ներգրավվածության վերաբերյալ տեսական մոտեցումները: Մասնավորապես, արդյունքները թույլ են տալիս կամրջել վարքի կարգավորման կողմնորոշման տեսությունը և ուսանողների ներգրավվածության հայեցակարգը՝ ցույց տալով, որ դրանք նկարագրում են նպատակադրման և վարքի կարգավորման նույն հոգեբանական մեխանիզմի տարբեր դրսևորումներ՝ «ընդառաջ գնալն ընդդեմ խուսափման»: Հետազոտությունը նպաստում է նաև աճին միտված մտածելակերպի տեսության ընդլայնմանը: Արդյունքները ցույց են տալիս, որ ինքնազարգացման հնարավորության վերաբերյալ համոզմունքը կարևոր է բարեկեցության համար, սակայն այն առավել արդյունավետ է այն դեպքում, երբ վերածվում է առաջխաղացմանն ուղղված վարքային ռազմավարության:

Հետազոտության գործնական նշանակությունը: Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել բուհերում ուսանողների աջակցության համալիր ծրագրերի մշակման համար: Այդ ծրագրերը պետք է ուղղված լինեն ոչ միայն առանձին հոգեբանական ծառայությունների տրամադրմանը, այլ նաև ակադեմիական միջավայրի և

ուսուցման մեթոդաբանության բարելավմանը: Գործնական տեսանկյունից կարևոր է շեշտադրել առաջխաղացման, ձեռքբերման և ինքնազարգացման մոտիվացիան, ոչ թե ձախողման վախի կամ կանխարգելման վրա հիմնված հաղորդակցման ու ուսուցման ռազմավարությունները:

Ստացված արդյունքները կարող են հիմք ծառայել ուսանողների բարեկեցության մոնիթորինգի, ակադեմիական ներգրավվածության խթանման, ուսումնական խորհրդատվության, քոուչինգի և հոգեբանական աջակցության ծրագրերի ձևավորման համար: Դրանք կարևոր են նաև դասախոսների և բուհական կառավարման մարմինների համար, քանի որ ցույց են տալիս, որ ակադեմիական գործընթացը կարող է դիտարկվել որպես հոգեբանական բարեկեցության պահպանման և զարգացման միջավայր:

Պաշտպանության ներկայացվող դրույթներ:

1. Ուսանողների հոգեբանական բարեկեցությունը պայմանավորված է ներգրավվածությամբ՝ առաջին հերթին ակադեմիական գործունեության մեջ, ապա նաև սոցիալական հարաբերություններում, ինչը ցույց է տալիս, որ ուսանողի՝ որպես սովորողի ինքնության ձևավորումը և ակադեմիական ձեռքբերումների փորձը նշանակալի են նրա հոգեկան և հոգեբանական բարեկեցության համար:
2. Աճին միտված մտածելակերպը դրական դեր ունի ուսանողների հոգեբանական բարեկեցության համար, սակայն այդ դերը ուժեղանում է այն դեպքում, երբ այն զուգակցվում է առաջխաղացմանն ու ձեռքբերմանն ուղղված դրդապատճառներով և վարքի կարգավորման ռազմավարություններով:
3. Ուսանողների հոգեբանական բարեկեցությունը պայմանավորված է ինչպես վարքային բաղադրիչով՝ ակադեմիական միջավայրում ներգրավվածությամբ, այնպես էլ անհատական տարբերություններով՝ վարքի կարգավորման դրդապատճառներով և ինքնազարգացման վերաբերյալ համոզմունքներով: Այս արդյունքը հոգեբանական բարեկեցությունը ներկայացնում է «անձ-միջավայր համապատասխանության» մոտեցման շրջանակում:
4. Ակադեմիական ներգրավվածությունը նպաստում է բարեկեցությանը հատկապես այն դեպքում, երբ զուգակցվում է առաջխաղացման և ձեռքբերման դրդապատճառներով: Եթե ներգրավվածությունը պայմանավորված է ձախողումից խուսափելու կամ պարտավորությունները չկորցնելու կանխարգելման կողմնորոշմամբ, այն կարող է ուղեկցվել բարեկեցության նվազումով:

5. Ուսանողների հոգեբանական բարեկեցությունը պետք է խթանվի ոչ միայն ֆոկուսացված հոգեբանական միջամտություններով, այլև ակադեմիական միջավայրի, ուսումնառության կազմակերպման և դասավանդման մեթոդաբանության միջոցով՝ շեշտը դնելով առաջխաղացման դրդապատճառների, ինքնազարգացման համոզմունքների և ակադեմիական ներգրավվածության վրա:

Ստացված տվյալների հուսալիությունն ու հավաստիությունն ապահովվում է հետազոտության տեսամեթոդաբանական հիմնավորվածությամբ, հիմնախնդրին առնչվող աղբյուրների խորքային վերլուծությամբ, նպատակին համապատասխան խնդիրների և վարկածների առաջադրմամբ, կիրառված գործիքների հոգեմետրիկ չափանիշների՝ հուսալիության և վալիդության ստուգմամբ, ինչպես նաև վիճակագրական վերլուծության համարժեք մեթոդների կիրառմամբ:

Ատենախոսության փորձաքննությունը: Աշխատանքի արդյունքները քննարկվել են ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի նիստերում և «Անձ և սոցիալական միջավայր» գիտահետազոտական լաբորատորիայի գիտական սեմինարներին: Ատենախոսության արդյունքներն արտացոլվել են 6 գիտական հրապարակումներում և ներկայացվել են մեկ միջազգային գիտաժողովում՝ «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» խորագրով:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, գիտական վերլուծության երկու տեսական գլուխներից, հետազոտության մեթոդաբանությունը, արդյունքները և գործնական առաջարկները ներկայացնող մեկ էմպիրիկ գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը ներառում է 11 աղյուսակ, 2 նկար և բաղկացած է 105 էջից՝ առանց հավելվածների:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունը ներկայացնում է թեմայի արդիականությունը, հիմնավորում է ուսանողների հոգեբանական բարեկեցության ուսումնասիրության անհրաժեշտությունը ժամանակակից բարձրագույն կրթության պայմաններում, սահմանում է հետազոտության նպատակը, խնդիրները, հիմնական վարկածը և ենթավարկածները, օբյեկտը, առարկան, տեսամեթոդաբանական հիմքը, կիրառված մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը: Ներածության մեջ ընդգծվում է, որ բուհական միջավայրում բարեկեցությունը պետք է դիտարկել ոչ միայն հոգեկան առողջության կլինիկական ցուցանիշների, այլև ուսանողի ակադեմիական

ներգրավվածության, ինքնազարգացման համոզմունքների և վարքի կարգավորման դրդապատճառային ուղղվածության համատեքստում:

Ատենախոսության **առաջին գլխում** ՝ ***«Բարեկեցության հիմնախնդիրը ակադեմիական միջավայրում»***, համակարգված կերպով վերլուծվում են հոգեբանական բարեկեցության տեսական և կիրառական մոտեցումները, ինչպես նաև հոգեբանական բարեկեցության հիմնախնդիրը բարձրագույն բուհի ուսանողների ուսումնական գործունեության համատեքստում: *Առաջին գլխի 1.1 ենթագլխում* ներկայացվում են բարեկեցության հիմնախնդրի շուրջ հիմնական հայեցակարգերը և ուսումնասիրությունները: Մասնավորապես, անդրադարձ է կատարվում բարեկեցության հեդոնիկ և էվդեմոնիկ կողմին, Է. Դիների սուբյեկտիվ բարեկեցության հայեցակարգին, Քրիֆի հոգեբանական բարեկեցության բազմաչափ մոդելին, ինչպես նաև բարեկեցության՝ որպես անձնային աճի, ինքնաիրացման, նպատակայնության և միջավայրի հետ արդյունավետ փոխազդեցության ուսումնասիրություններին: Այս բաժինը ստեղծում է այն տեսական հիմքը, որի վրա հետագայում մեկնաբանվում են ուսանողների անձնային և ակադեմիական գործոնների ազդեցությունները:

Առաջին գլխի 1.1 ենթագլխում առանձին քննարկվում է հոգեբանական բարեկեցության խնդիրը բուհերի ուսանողների շրջանում: Ցույց է տրվում, որ ուսանողական տարիքը համընկնում է ինքնուրույնության, մասնագիտական ինքնորոշման, սոցիալական կապերի ընդլայնման և ակադեմիական բարձր պահանջների հետ: Բուհական միջավայրը կարող է միաժամանակ լինել զարգացման ռեսուրս և սթրեսի աղբյուր: Այս պատճառով ուսանողի բարեկեցությունը դիտարկվում է որպես անձ-միջավայր համապատասխանության արդյունք, որտեղ նշանակալի են ինչպես կրթական միջավայրի աջակցող բնույթը, այնպես էլ ուսանողի ներգրավվածությունը և ինքնակարգավորման ձևերը:

Ատենախոսության **երկրորդ գլխում** ՝ ***«Ուսանողների բարեկեցությունը պայմանավորող գործոններ»,*** վերլուծվում են ուսանողների բարեկեցության սոցիալ-հոգեբանական, համատեքստային և անհատական կանխորոշիչները: *Երկրորդ գլխի 2.1 ենթագլխում* ուսանողների ներգրավվածությունը ներկայացվում է որպես բազմաբաղադրիչ երևույթ, որն ընդգրկում է ակադեմիական ակտիվությունը, ուսումնական ջանքը, դասերին մասնակցությունը, համառությունը, ինչպես նաև սոցիալական շփումները, համակուրսեցիների և դասախոսների հետ կապերը և համալսարանական համայնքին պատկանելության զգացումը: *Երկրորդ գլխի 2.2 ենթագլխում*

ներկայացվում են վարքի կարգավորման կողմնորոշման և աճին միտված մտածելակերպի տեսությունները: Առաջխաղացման կողմնորոշումը մեկնաբանվում է որպես նվաճման, զարգացման և ձեռքբերման վրա ուղղված դրդապատճառային համակարգ, մինչդեռ կանխարգելման կողմնորոշումը կապվում է սխալներից, կորուստներից և ձախողումներից խուսափելու հետ: Աճին միտված մտածելակերպը դիտարկվում է որպես համոզմունք, որ ընդունակությունները կարելի է զարգացնել ջանքի, սովորելու և փորձի միջոցով: Այս տեսությունները միասին թույլ են տալիս բացատրել, թե ինչու նույն ակադեմիական պահանջները տարբեր ուսանողների մոտ կարող են առաջացնել ինչպես հոգեբանական բարեկեցություն, այնպես էլ անհանգստություն կամ հյուծվածություն:

Ատենախոսության **երրորդ գլխում՝** ***«Ուսանողների հոգեբանական բարեկեցության կանխորոշիչները. էմպիրիկ հետազոտության արդյունքներ»***, ներկայացված են երկու անկախ ուսումնասիրությունների մեթոդաբանությունը, արդյունքների վիճակագրական վերլուծությունը և մեկնաբանությունը: Առաջին ուսումնասիրությունը վերաբերում է աճին միտված մտածելակերպի և վարքի կարգավորման կողմնորոշումների կանխորոշիչ դերին, իսկ երկրորդը՝ ակադեմիական և սոցիալական ներգրավվածության դերին ուսանողների հոգեբանական բարեկեցության մեջ: *Երրորդ գլխի 3.1 ենթագլխում* առանձին ենթաբաժիններով հիմնավորված ներկայացված են երկու ուսումնասիրությունների գործիքակազմը և ընտրանքը: Առաջին հետազոտության հարցման մասնակիցները Երևանի տարբեր բուհերից հավաքագրված 18-25 տարեկան 332 ուսանողներ են, որոնք սովորել են բակալավրի կրթական ծրագրերում: Ըստ սեռի բաշխվածության՝ մասնակիցների 25%-ը արական սեռի ներկայացուցիչներ են, իսկ 75%-ը՝ իգական: Կիրառվել են Ք. Դվեկի *«Աճին միտված մտածելակերպի սանդղակը»*, Թ. Հիջինսի *«Վարքի կարգավորման կողմնորոշման հարցարանը»*, *«Ուորվիկ-Էդինբուրգի հոգեկան բարեկեցության սանդղակը»:* Երկրորդ հետազոտության հարցման մասնակիցները նույնպես հանդիսացել են բակալավրիատի կրթական ծրագրի ուսանողներ: Ընդհանուր մասնակցել են 94 ուսանող, ըստ սեռի բաշխվածության՝ մասնակիցների մոտ 33%-ը արական սեռի ներկայացուցիչներ են, իսկ 67%-ը՝ իգական: Ուսանողների ներգրավվածությունը գնահատվել է *«Բարձրագույն կրթության ուսանողների ներգրավվածության սանդղակի»* ադապտացված տարբերակի միջոցով. հաստատող գործոնային վերլուծությամբ ստուգված մոդելի բնութագրերը բավարարող են (χ^2=399.248, p<0.001;

CFI=0.907; TLI=0.880; RMSEA=0.068), ինչը թույլ է տվել սույն աշխատանքի մեջ կիրառել երկգործոն վերլուծությունը[1]:

Երրորդ գլխի 3.2 ենթագլխում առանձին ենթաբաժիններով ներկայացվում են երկու ուսումնասիրությունների վերլուծության արդյունքները և մեկնաբանությունները, ինչպես նաև առանձին ենթաբաժնով՝ երկու ուսումնասիրությունների արդյունքների համադրական վերլուծությունը և գործնական առաջարկները: Առաջին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մասնակիցների շրջանում արձանագրվել է աճին միտված մտածելակերպի (M=36.71) և հոգեկան բարեկեցության (M=51.68) միջին միավոր: Ինչ վերաբերում է վարքի կարգավորման կողմնորոշումներին, մասնակիցների մոտ արձանագրվել է առաջխաղացման կողմնորոշման ավելի բարձր մակարդակ (M = 5.01, SD = 0.86)՝ կանխարգելման կողմնորոշման (M=4.04, SD=0.90) համեմատ: Կորելյացիոն վերլուծության արդյունքները արդյունքները ցույց են տալիս, որ հոգեբանական բարեկեցությունը դրականորեն կապված է աճին միտված մտածելակերպի և հատկապես առաջխաղացման կողմնորոշման հետ: Կանխարգելման կողմնորոշման կապը բարեկեցության հետ թույլ է բացասական միտումով է արտահայտված, իսկ ռեգրեսիոն վերլուծության մեջ այն դրսևորվում է որպես բացասական կանխորոշիչ:

Աղյուսակ 1. Առաջին ուսումնասիրության հիմնական կորելյացիոն կապերը

Փոփոխականներ	1	2	3	4
1. Հոգեկան բարեկեցություն	—			
2. Աճին միտված մտածելակերպ	.28**	—		
3. Առաջխաղացման կողմնորոշում	.39**	.16**	—	
4. Կանխարգելման կողմնորոշում	-.06	-.14*	.30**	—

Ծանոթագրություն. * p < .05, ** p < .01: Աղյուսակը սեղմագրային ձևով ներկայացնում է ատենախոսության կորելյացիոն արդյունքները:

Նկարը 1-ը ցույց է տալիս, որ հոգեբանական բարեկեցության և աճին միտված մտածելակերպի մակարդակներում սեռային էական տարբերություններ չեն արձանագրվել, մինչդեռ վարքի կարգավորման կողմնորոշումների մեջ վիճակագրորեն նշանակալի տարբերություններ ($_{promotion}$ t=-2.65, p=.008, d=0.34, $_{prevention}$ t=-3.52, p<.001, d=0.47):

[1] Հարցարանի հոգեմետրիկ փուլային վերլուծությունը իրականացվել է ԵՊՀ “Անձ և սոցիալական միջավայր” գ/հ լաբորատորիայի կողմից:



Նկար 1. Սեռային տարբերություններ առաջին ուսումնասիրության փոփոխականներում

Իրականացվել է քառափուլ բազմակի ռեգրեսիոն վերլուծություն՝ կանխատեսելու հոգեբանական բարեկեցությունը՝ հիմնվելով ժողովրդագրական փոփոխականների, աճին միտված մտածելակերպի, առաջխաղացման կողմնորոշման և կանխարգելման կողմնորոշման վրա: Վերջնական մոդելում խթանման կողմնորոշումը ամենաուժեղ դրական կանխատեսող գործոնն էր հոգեբանական բարեկեցության համար (β=.45, p<.001): Ինչպես և ակնկալվում էր, կանխարգելման կողմնորոշումը եղել է նշանակալի բացասական կանխորոշիչ գործոն (β=-.19, p<.001): Աճին միտված մտածելակերպը պահպանվել է որպես զգալի դրական կանխատեսող գործոն (β=.17, p=.001): Ինչ վերաբերում է ժողովրդագրական տվյալներին, հետաքրքրական այն է, որ առկա ուսուցումը զգալիորեն կանխորոշում է հոգեբանական բարեկեցության ավելի ցածր մակարդակ (β=-.13, p=.013): Բացի այդ, դուրս է բերվել, որ ուսուցման առկա ձևը կապված է ավելի ցածր բարեկեցության հետ, ինչը մատնանշում է տվյալ ընտրանքում առկա ուսուցմամբ սովորողների համար բնորոշ համակարգային սթրեսորների գոյության մասին:

Աղյուսակ 2. Ամփոփիչ ռեգրեսիոն մոդել բոլոր կանխորոշիչներով

Փոփոխականներ	*B*	*SE*	*β*	*t*	*p*
(Constant)	27.63	5.36		5.16	.001
Սեռ	-0.57	1.07	-.03	-0.53	.595
Տարիք	0.07	0.17	.02	0.42	.678
Կուրս (ուսումնառության տարի)	0.42	0.58	.04	0.73	.466

Առկա ուսուցում	-2.61	1.04	-.13	-2.50	.013*
Անվճար ուսուցում	1.30	1.09	.06	1.19	.235
Աշխատանք	0.50	0.89	.03	0.56	.577
Աճին ուղղված մտածելակերպ	0.24	0.08	.17	3.23	.001**
Առաջխաղացում	4.23	0.50	.45	8.45	.000**
Կանխարգելում	-1.75	0.49	-.19	-3.57	.001**

Ծանոթագրություն. N = 324. R^2=.269, F(9,307)=12.58, p<.001.

Առաջին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն, թե ուսանողները ինչպես են կարգավորում իրենց նպատակադրումներին ուղղված վարքը ավելի կարևոր է հոգեբանական բարեկեցության համար, քան աճին ուղղված համոզմունքները:

Երկրորդ ուսումնասիրության արդյունքները վերաբերում են ուսանողների ներգրավվածությանը: Նկարագրական վիճակագրությունը ցույց է տալիս, որ հոգեբանական բարեկեցության միջին ցուցանիշը թեքված է դեպի բարձր մակարդակ (M=49.93, SD = 8,73), իսկ ակադեմիական ներգրավվածության ցուցանիշը (M=3.70, SD=0.79), գերազանցում է սոցիալական ներգրավվածության ցուցանիշին (M=3.28, SD=0.92): Ակադեմիական ներգրավվածության և սոցիալական ներգրավվածության միջև գրանցվել է ուժեղ դրական փոխկապակցվածություն (r=.63, p=001), ինչը ցույց է տալիս, որ ներգրավվածության մի ձևը ենթադրում է նաև այլ ներգրավվածություն: Բացի այդ, հոգեբանական բարեկեցությունը դրական փոխկապակցվածություն ունի ինչպես ակադեմիական ներգրավվածության (r=.329, p=.001), այնպես էլ սոցիալական ներգրավվածության հետ (r = .327, p = .001: Արդյունքները ցույց են տալիս, որ որքան բարձր է հոգեբանական բարեկեցությունը, այնքան բարձր է ուսանողների ներգրավվածությունը:

Աղյուսակ 3. Երկրորդ ուսումնասիրության հիմնական կորելյացիոն կապերը

Փոփոխական	1	2	3
1. Հոգեկան բարեկեցություն	—	.329**	.327**
2. Ակադեմիական ներգրավվածություն	.329**	—	.633***
3. Սոցիալական ներգրավվածություն	.327**	.633***	—

Ծանոթագրություն. ** p < .01, *** p < .001:



Նկար 2. Սեռային տարբերություններ երկրորդ ուսումնասիրության փոփոխականներում

Նկարը 2-ը ցույց է տալիս, որ երկրորդ ուսումնասիրության ընտրանքում կանանց մոտ ակադեմիական և սոցիալական ներգրավվածության միջին ցուցանիշներն ավելի բարձր են (academic engagemen t=-6.34, p=.000, d=1.41, social engagement t=-3.93, p=.000, d=0.87), մինչդեռ հոգեբանական բարեկեցության տարբերությունը վիճակագրորեն նշանակալի չէ:

Աղյուսակ 4. Երկրորդ ուսումնասիրության ամբողջական ռեգրեսիոն մոդելի առանցքային կանխորոշիչները

Փոփոխականներ	*B*	*SE*	*β*	*t*	*p*
(Constant)	33.19	13.39		2.48	.015
Սեռ	-5.67	2.49	-.30	-2.28	.026*
Տարիք	-0.72	0.51	-.20	-1.43	.158
Կուրս (ուսումնառության տարի)	2.44	1.15	.26	2.13	.036*
Առկաուսուցում	-1.68	4.88	-.04	-0.34	.732
Անվճար ուսուցում	5.70	2.41	.26	2.37	.020*
Աշխատանք	2.34	1.89	.13	1.24	.220
Ակադեմիական ներգրավվածություն	4.91	1.64	.46	3.00	.004**
Սոցիալական ներգրավվածություն	2.41	1.23	.26	1.97	*.053*†

Ծանոթագրություն. R^2=.29, F(8,73)=3.769, p=.001

Վերջնական մոդելում ակադեմիական ներգրավվածությունը մնաց նշանակալի դրական կանխորոշիչ (β=.46, p=.004): Սոցիալական ներգրավվածությունը նույնպես դրականորեն կապված է բարեկեցության հետ, սակայն սահմանային նշանակալիության շեմով (β=.26, p=.053).

Հետաքրքրական է, որ վերջին մոդելում նույնպես նշանակալի մնացին որոշ վերահսկվող գործոններ, ինչպես երկրորդ մոդելում՝ սեռը (β=-.30, p=.026, իգական), ուսումնառության տարին (β=.26, p=.036) և անվճար ուսումը (β=.26, p=.020): Սա ցույց է տալիս, որ ակադեմիական ներգրավվածությունը դարձավ ամենաազդեցիկ կանխորոշիչ գործոնը:

Մինչդեռ միջինների համեմատությունը ցույց տվեց, որ իգական սեռի ուսանողները զգալիորեն ավելի բարձր ներգրավվածություն են դրսևորում, քան արական սեռի ուսանողները, սակայն ռեգրեսիոն վերլուծությունը բացահայտեց ավելի բարդ պատկեր: Ռեգրեսիոն վերլուծությունը բացահայտեց, որ իգական սեռի գործոնը հակադիր նշանակություն ունի հոգեբանական բարեկեցության համար (β=-.30, p=.026) երբ որպես կանխորոշիչներ դիտարկվում են ակադեմիական և սոցիալական ներգրավվածությունը: Տարբեր մեթոդներով վերլուծության այսպիսի տարբերությունը ցույց է տալիս «ճնշման էֆեկտ» (suppression effect): Այս արդյունքը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. իգական սեռի ուսանողների ակադեմիական բարձր ներգրավվածության մակարդակը կարծես «ծածկում» է առկա խորքային հոգեբանական խոցելիությունը: Եթե արական և իգական սեռի ուսանողները ունենային նույն մակարդակի ակադեմիական ներգրավվածություն, աղջիկ ուսանողներ հավանաբար կդրսևորեին զգալիորեն ավելի ցածր հոգեբանական բարեկեցություն:

Երկու հարցումների արդյունքների համեմատությունը ցույց է տալիս սիմետրիկ պատկեր կանխորոշիչ փոփոխականների առումով: Առաջին ուսումնասիրությունը բացահայտեց, որ անհատական հոգեբանական բնութագրերը (աճին միտված մտածելակերպը և վարքի կարգավորող կողմնորոշումը) բացատրում են հոգեբանական բարեկեցության դիսպերսիայի 26.9%-ը, մինչդեռ երկրորդ հետազոտությունը ցույց տվեց, որ ակադեմիական և սոցիալական ներգրավվածությունը բացատրում է ուսանողների հոգեբանական բարեկեցության դիսպերսիայի գրեթե նույնական դիսպերսիան 29.2%-ը: Այս արդյունքը հիմնավորում է այն տեսակետը, որ ուսանողների հոգեբանական բարեկեցության պահպանման համար հավասարապես կանխորոշիչ նշանակություն ունեն ինչպես վարքային՝ միաջավայրով պայմանավորված, այնպես էլ անհատական տարբերություններով պայմանավորված գործոնները:

Երկու ուսումնասիրությունների համադրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ուսանողների հոգեբանական բարեկեցությունը պայմանավորված է ոչ թե միայն ներանձնային առանձնահատկություններով կամ միայն բուհական միջավայրով, այլ

դրանց փոխազդեցությամբ: Աճին միտված մտածելակերպը բարենպաստ գործոն է, սակայն դրա ազդեցությունը առավել արդյունավետ է, երբ այն զուգակցվում է առաջխաղացման ուղղված դրդապատճառներով: Նույն կերպ ակադեմիական ներգրավվածությունը բարեկեցության համար առավել նշանակալի է, երբ ուսանողը ներգրավված է ոչ թե ձախողումից խուսափելու, այլ ձեռքբերման, զարգացման և առաջընթացի նպատակադրմամբ: Արդյունքները ցույց են տալիս, որ հատկապես իգական սեռի ներկայացուցիչները և կանխարգելման բարձր կողմնորոշում ունեցողները, կարող են թվալ հաջողակ իրենց բարձր առաջադիմության կամ հավակնությունների շնորհիվ, սակայն այդ հաջողությունն «քողարկում» է նրանց սթրեսի և տագնապի ապրումները: Արդյունքները վերահաստատում են, որ նույնիսկ հաջողության ուղղված մտածելակերպի և վարքի պարագայում համակարգային ճնշումները (փող և ժամանակ) ազդեցություն են ունենում հոգեբանական բարեկեցության և հոգեկան առողջության վրա:

Ատենախոսության գործնական առաջարկություններում ընդգծվում է, որ բուհական աջակցության համակարգերը պետք է միավորեն հոգեբանական խորհրդատվությունը, ակադեմիական խորհրդատվությունը, ներգրավվածության խթանումը և առաջխաղացման դրդապատճառների զարգացումը: Ուսանողների հետ աշխատանքում նպատակահարմար է նվազեցնել բացառապես կանխարգելման և ձախողումից խուսափման պրակտիկաները՝ փոխարենը խթանելով ինքնազարգացման, ձեռքբերման, ակադեմիական իմաստավորման և համալսարանական միջավայրում ակտիվ մասնակցության ռազմավարությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուսանողների հոգեբանական բարեկեցությունը ակադեմիական միջավայրում ձևավորվում է որպես անձնային հոգեբանական բնութագրերի և բուհական միջավայրում ներգրավվածության փոխազդեցության արդյունք: Այն չի կարող ամբողջությամբ բացատրվել միայն անհատական հատկություններով կամ միայն արտաքին միջավայրային պայմաններով:
2. Ակադեմիական ներգրավվածությունը հոգեբանական բարեկեցության առավել նշանակալի կանխորոշիչներից է: Սոցիալական ներգրավվածությունը ևս դրական դեր ունի, սակայն չի փոխարինում ակադեմիական ներգրավվածության կենտրոնական նշանակությանը:
3. Աճին ուղղված մտածելակերպը՝ որպես սեփական կարողությունների զարգացելիության վերաբերյալ համոզմունք, նշանակալի դեր ունի

բարեկեցության համար, սակայն դրա ազդեցությունն առավել արդյունավետ է այն դեպքում, երբ այն վերածվում է առաջխաղացմանն ու ձեռքբերմանն ուղղված վարքային ռազմավարության:

4. Կանխարգելման կողմնորոշումը, այսինքն՝ ձախողումից խուսափելու կամ պարտավորությունները կորցնելու վախից բխող վարքային կարգավորումը, կարող է նպաստել հոգեբանական բարեկեցության նվազմանը: Սա հատկապես կարևոր է այն ուսանողների դեպքում, ովքեր արտաքինից կարող են ցուցադրել բարձր ներգրավվածություն կամ առաջադիմություն, սակայն ներսում ապրել սթրես և տագնապ:
5. Երկու հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների բարեկեցության ամենանշանակալի հոգեբանական առանցքը «ձգտման կողմնորոշումն» է՝ թե՛ որպես ակադեմիական ներգրավվածություն, թե՛ որպես հաջողություններին և ինքնազարգացմանը միտված մոտիվացիա:
6. Համակարգային գործոնները՝ ուսուցման ձևը, ուսման վճարի տեսակը, ուսումնական ծանրաբեռնվածությունը և ֆինանսական ճնշումները, նույնպես կարող են ազդել ուսանողների բարեկեցության վրա: Ուստի բուհական աջակցության քաղաքականությունը պետք է համադրի անհատական հոգեբանական աջակցությունը և ակադեմիական միջավայրի կազմակերպական փոփոխությունները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հրատարակված հետևյալ հրապարակումներում՝

1. Song Z., An overview of how peer mindsets influence the well-being of young adults in the context of learning. KATCHAR Scientific Periodical, № 1, 2024, 10 p.. DOI: https://doi.org/10.54503/2579-2903-2024.1-53
2. Song Z., Grigoryan A., Khachatryan N., Investigating the Influence of Students' Engagement on Subjective Well-Being in Armenian Higher Education Context: Insights From a Cross-Sectional Study. Bulletin of Yerevan University E: Philosophy, Psychology, 15(1), 2024, pp. 57–64. DOI: https://doi.org/10.46991/BYSU:E/2024.15.1.057
3. Song Z., Personal Growth and Well-Being Among University Students: A Comprehensive Analysis. Journal of Education in Black Sea Region, 9(2), 2024, pp. 39–48.

4. Song Z., Serobyan A., Understanding individuals' well-being in higher education: A critical review of the Warwick-Edinburgh Mental Well-being Scale and its implications. Journal of Biomedical and Medical Sciences, 3(7), 2024, pp. 88–99.
5. Song Z., Do regulatory focus and mindset affect young adults' well-being? The study of individual differences on psychological well-being. Bulletin of Yerevan University E: Philosophy, Psychology, 15(3/45), 2024, pp. 73–79. DOI: https://doi.org/10.46991/BYSU:E/2024.15.3.073
6. Song Z., An analysis of regulatory focus on university student well-being. Armenian Journal of Mental Health, 15(2), 2024, 9 p.. DOI:
7. Song Z., A review of how the use of ChatGPT in learning affects student well-being. Modern Psychology, 6(2(13)), 2025, pp. 89–96. DOI: https://doi.org/10.46991/SBMP/2023.6.2.089
8. Song Z., Current views of psychedelics and their connection to well-being. The New Armenian Medical Journal, 18(1), 2024, pp. 80–88. DOI: https://doi.org/10.56936/18290825-18.2024-80
9. Song Z., A contemporary analysis of the effects of neuroplasticity on well-being. Armenian Journal of Health & Medical Sciences, 4(1), 2024, pp. 46–53. DOI: https://doi.org/10.54235/27382737-2024.v4.1-46

СОНГ ЖЕЮ

РОЛЬ ЛИЧНОСТНЫХ ОСОБЕННОСТЕЙ И АКАДЕМИЧЕСКОЙ ВОВЛЕЧЕННОСТИ В ПСИХОЛОГИЧЕСКОМ БЛАГОПОЛУЧИИ СТУДЕНТОВ

Автореферат диссертации на соискание учёной степени кандидата психологических наук по специальности 19.00.01 ««Общая психология. Теория и история психологии. Психология личности». Защита диссертации состоится 2-го июля 2026 года в 16^{00} на заседании специализированного совета 067 КВОН при Ереванском Государственном Университете (0025, г. Ереван, Абовяна 52а).

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Период студенчества сопровождается существенными изменениями, связанными с академическими требованиями, формированием самостоятельности, расширением социальных связей и неопределенностью профессионального будущего. В этих условиях психологическое благополучие студентов становится важным показателем не только психического здоровья, но и устойчивости академического развития. Современная студент-центрированная модель высшего образования требует рассматривать благополучие как результат взаимодействия личностных ресурсов студента и образовательной среды.

Цель исследования. Изучить прогностическую роль индивидуально-психологических особенностей и вовлеченности в академической среде в сохранении психологического благополучия студентов вузов на основе двух эмпирических исследований.

Задачи исследования:

1. Провести теоретический анализ подходов к психологическому благополучию, регуляции поведения, теории мышления роста и студенческой вовлеченности.
2. Изучить связь академической и социальной вовлеченности с психологическим благополучием студентов и определить их прогностическую роль.
3. Исследовать связь мышления развития, фокусы продвижения и превенции с психологическим благополучием студентов.
4. Сопоставить результаты двух исследований и сформулировать доказательные рекомендации для систем поддержки студентов.

Гипотеза исследования. Предполагается, что психологическое благополучие студентов является многомерным феноменом и значимо прогнозируется совместным влиянием академической и социальной вовлеченности, когнитивных и мотивационных компонентов саморегуляции поведения. *Частные гипотезы:* (1) Индивидуальные различия в регуляции поведения, в частности, мышление роста и фокус продвижения являются значимыми положительными предикторами, а фокус превенции выступает в качестве отрицательного предиктора

психологического благополучия студентов. (2) Академическая и социальная вовлеченность студентов в университетскую среду положительно влияет на психологическое благополучие студентов.

Научная новизна. Исследование показывает, что психологическое благополучие студентов в академической среде имеет не только личностную и не только средовую обусловленность. Выявлено, что ориентация на продвижение и достижение, а также академическая вовлеченность выступают ключевыми положительными предикторами благополучия, тогда как ориентация на предотвращение и избегание ошибок может снижать психологическое благополучие.

Теоретическая значимость. Результаты исследования расширяют представления о взаимосвязи теории регуляторного фокуса, мышлении роста и концепции студенческой вовлеченности. Показано, что эти подходы описывают разные уровни одного психологического механизма: ориентации на приближение к достижениям или избегание неудач. Вовлеченность студентов в университетскую среду, в частности через академическую и социальную вовлеченность, существенно предопределяет психологическое благополучие.

Практическая значимость. Полученные результаты могут быть использованы при разработке комплексных университетских программ поддержки студентов, академического консультирования, психологического сопровождения и образовательных стратегий, направленных на развитие мотивации достижения, саморазвития и осмысленной академической вовлеченности.

Достоверность результатов. Достоверность обеспечивается теоретико-методологической обоснованностью, применением стандартизированных методик, проверкой психометрических показателей инструментов, использованием корреляционного, сравнительного и регрессионного анализа, а также сопоставлением результатов двух независимых эмпирических исследований.

Апробация результатов. Основные положения диссертации обсуждались на заседаниях кафедры психологии личности Ереванского государственного университета и научных семинарах н/и лаборатории «Личность и социальная среда». Результаты отражены в 9 научных публикациях и представлены на международной научной конференции.

Структура работы. Диссертация состоит из введения, двух теоретических глав, одной эмпирической главы, заключения, списка литературы и приложений. Работа включает 11 таблиц, 2 рисунка и содержит 105 страниц без приложений.

SONG ZHEYU

WHAT PREDICTS PSYCHOLOGICAL WELL-BEING OF STUDENTS IN HIGHER EDUCATION? THE ROLE OF INDIVIDUAL DIFFERENCES AND ACADEMIC ENGEGEMENT

Dissertation thesis for the scientific degree of PhD in psychological sciences in speciality 19.00.01 - General psychology, theory and history of psychology, psychology of personality.

The defence of the dissertation will be held on July 2, 2026, at 16^{00} at the session of the Specialized Council 067 in Psychology of the HESC of the Republic of Armenia at Yerevan State University. Address: 0025, Yerevan, st. Abovyan 52a.

SUMMARY

The relevance of the issue. The student period is marked by substantial developmental changes, including increasing autonomy, new social networks, academic demands, financial or family responsibilities, and uncertainty about the future. Under these conditions, students' psychological well-being becomes a key indicator of mental health, academic continuity, and personal development. The modern student-centered model of higher education requires universities to support students not only through academic performance policies but also through environments that strengthen well-being, motivation, and adaptive self-regulation.

The goal of the research. To examine the predictive role of individual psychological characteristics and engagement in the academic environment in maintaining university students' psychological well-being through two independent empirical studies.

Research Objectives.

1. To synthesize theoretical approaches to behavioural regulation, goal orientations, growth mindset, and student engagement in order to develop a conceptual framework for understanding psychological well-being in the academic environment.
2. To examine the relationship between academic and social engagement and students' psychological well-being and evaluate their predictive role.
3. To examine the relationship between individual differences, including growth mindset, promotion orientation, and prevention orientation, and psychological well-being.
4. To integrate the findings of the two studies and formulate evidence-based recommendations for university support systems.

Main Hypothesis. Students' psychological well-being is a multidimensional phenomenon significantly predicted by the joint influence of academic and social

engagement, growth mindset, and motivational components of behavioural regulation, particularly promotion and prevention orientations. *Sub-Hypotheses:* (1) Individual differences in behavioural regulation—specifically growth mindset and promotion-oriented (achievement) goal setting—positively and significantly predict students' psychological well-being, whereas prevention-oriented goal setting negatively predicts psychological well-being. (2) Student engagement in the university environment—specifically academic and social engagement—positively and significantly predicts students' psychological well-being.

Scientific Novelty. The study demonstrates that psychological well-being in the academic environment is determined neither solely by individual characteristics nor solely by contextual factors. Promotion-oriented motivation and academic engagement emerge as central positive predictors of psychological well-being, while prevention orientation, based on avoiding errors and failures, is shown to be unfavourable for students' well-being.

Theoretical Significance. The research contributes to the integration of regulatory focus theory, growth mindset theory, and the conceptual approach to student engagement. The results suggest that these frameworks describe different manifestations of the same underlying psychological mechanism: approach-oriented striving versus avoidance-oriented regulation.

Practical Significance. The results can be applied in the development of comprehensive student support programs, academic advising, coaching, and psychological assistance services. The findings indicate that universities should encourage achievement-oriented communication, meaningful academic engagement, and self-development beliefs rather than relying primarily on fear of failure or prevention-based motivation.

Data Reliability. The reliability of the results is ensured by the theoretical and methodological grounding of the study, the use of standardized instruments, psychometric assessment of reliability and validity, correlation and regression analyses, and the comparative interpretation of two independent empirical datasets.

Approbation and Adoption of the Research Results. The findings were discussed at meetings of the Department of Personality Psychology at Yerevan State University and at scientific seminars of the "Personality and Social Environment" research laboratory. The results are reflected in 9 scientific publications and were presented at one international conference.

Work Structure. The dissertation consists of an introduction, two theoretical chapters, one empirical chapter, conclusions, references, and appendices. The work comprises 11 tables and 2 figures, spanning 105 pages, excluding appendices.